



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2022 թվականի թիվ 33-Ն

ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 94-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշման Հավելված N 1-ի 17-րդ կետում «ձևով» բառից հետո լրացնել «՝ անդրադառնալով սույն կարգի 37-րդ կետի բոլոր չափանիշներին:» բառերը:

2) Որոշման Հավելված N 1-ի 32-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«32. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, սույն կարգի 37-րդ կետի չափանիշները հաշվի առնելով, մրցույթի յուրաքանչյուր մասնակցի գնահատում է գնահատման թերթիկում՝ ամբողջ թվով՝ 20 միավորային սանդղակով: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատման թերթիկին կից ներկայացնում է իր գնահատման հիմնավորումը: Մրցույթում անցողիկ շեմ է համարվում հնարավոր առավելագույն վարկանիշային միավորի մեկ երրորդը:»:

3) Որոշման Հավելված N 1-ի 33-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«33. Հանձնաժողովի անդամների կողմից լրացված և հետնամասում ստորագրված գնահատման թերթիկները և գնահատման հիմնավորումները փոխանցվում են Հանձնաժողովի քարտուղարին: Վարկանիշային միավորը որոշվում է գնահատման միավորների հանրագումարով, որը հաշվարկում է Հանձնաժողովի քարտուղարը: Վարկանիշային միավորը հաշվարկելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը հայտարարում է այն:»:

4) Որոշման Հավելված N 1-ի Ձև N 2-ը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ .

«Ձև N 2

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման
լիցենզավորման մրցույթի անցկացման կարգի

**ՄԱՌԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՑԹԻ ՄԱՍՆԱԿՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԹԵՐԹԻԿ _____**

h/h	Մասնակցի անվանումը	Գնահատման միավորը
1		
2		
3		

_____»:
(օրը, ամիսը, տարեթիվը)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

S. ՀԱԿՈԲՅԱՆ

16 մարտի 2022թ.
ք. Երևան